ՀՏԴ.911.33 *Տնտեսական աշխարհագրություն*

Անահիտ Գրիգորյան,
ա.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ
srbuhi.tovmassian@mail.ru
Ռաֆիկ Սարգսյան,
դասախոս, ԱրՊՀ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԱՐԱԾ ԷԹՆԻԿԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հոդվածում ներկայացված է Արցախ-Ղարաբաղը՝ պատմական Հայաստանի տասներորդ նահանգը՝ Ադրբեջանի իշխանության 70 տարիների ժամանակահատվածում: Մանրազնին վերլուծված է Ադրբեջանի վարած էթնիկական և սոցիալ-տնտեսական քաղաքականությունն այդ ժամանակաշրջանում: Լուսաբանված է Արցախի տնտեսական համակարգերը, դրանց ենթահամակարգերը և դրանց տնտեսական ցուցանիշներն այդ ժամանակահատվածում: Կարևորվել է այն միտքը, որ Ադրբեջանը տարածաշրջանի տնտեսական պոտենցիալը վեր է ածել իր հումքային կցորդի: Քննարկված է նրա վարած էթնիկական՝ հայաթափման և Հայաստանից տարանջատելու նրա կիրառած բոլոր մեթոդները:

Բանալի բառեր՝ *Հումք, վարչաքաղաքական, ինքնահաստատում, կոնսոլիդացիա, էթնիկական, քաղաքակրթական, մեխանիկական աճ, բնական աճ, ինտերնացիոնալ, արդյունաբերություն:*

А. Григорян, Р. Саргсян

ЭТНИЧЕСКАЯ И СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКАЯ ПОЛИТИКА АЗЕРБАЙДЖАНА В АРЦАХЕ В ДОВОЕННОМ ПЕРИОДЕ

В статье представлена Арцах-Карабах- десятая провинция исторической Армении, в течении 70 лет правления Азербайджана. В подробностях анализирована этническая и социально-экономическая политика Азербайджана в этом периоде. Показаны экономические системы Арцаха, их подсистемы и их экономические показатели в этом промежутке. Выдвинута та идея, что Азербайджан превратил экономический потенциал региона в сырьевой придоток. Обсуждены методы, которые прикладывал Азербайджан для „деармянизации" Арцаха и для разделения с Арменией.

Ключевые слова; *Сырье, административно-политическое, самоутверждение, консолидация, этнический, цивилизационный, механический рост, естественный рост, международный, промышленность.*

A. Grigoryan, R. Sargsyan

THE ETHNIC AND THE SOCIAL-ECONOMIC POLITICS IN ARTSAKH DIRECTED BY AZERBAIJAN IN THE PRE-WAR PERIOD.

The article presents Artsakh-Karabakh – the 10th state of the historical Armenia, in the period of the 70-years empire of Azerbaijan. The ethnic and the social-economic politics directed by Azerbaijan in that period are analyzed in details. The economic systems of Artsakh, its sub-systems and its economic marks are shown in that period. The idea is emphasyzed, that Azerbaijan transmuted the economic potential of the region into raw material attachment. The ethnic methods of Azerbaijan- to expel Armenians from Artsakh and to separate from Armenia are discussed.

Key-words *Raw material, administrative-political, consolidation, ethnic, civilized, mechanical growth, natural growth, international, industry.*

Արցախ. Ղարաբաղ աշխարհը պատմական Հայաստանի տասներորդ նահանգը 1920-ական թվականների սկզբից 1921 թվականի հուլիսի 5-ին տեղի 95% կազմող հայ բնակչության կամքին

հակառակ, բոլշևիկյան բռնապետական մեթոդներով բռնակցելով նորաթուխ Ադրբեջանին, խորհրդային իշխանության շուրջ 70 տարիներին փաստորեն վեր էր ածվել նրա հումքային կցորդի: Ադրբեջանական իշխանությունները քաջ գիտակցելով, որ Արցախն տոհմիկ հայկական տարածք է, այստեղ՝ Արցախի տարածքի լեռնային մասում 1923թ. հուլիսին ստեղծված բնական հայկական ինքնավար մարզը հիմնականում դիտել են որպես գյուղատնտեսական հումքի արտադրության բազա:

Մայր Հայաստանին օտարացնելու նպատակով Ադրբեջանը բոլոր մեթոդները կիրառել է Արցախ Ղարաբաղ տարածքում ստեղծված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը տարածական առումով նրանից անջատել: Գաղափարային այդ հեռահար մտահղացումն իրականացնելու համար Ադրբեջանի իշխանությունները Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի ու Լեռնային Ղարաբաղի Շուշիի շրջանի միջև եղած 6-7 կմ. լայնությամբ տարածքը Բերձորը հայաթափել և բնակեցրել են սկզբից քրդերով, իսկ հետո անասնապահ ադրբեջանցիներով: Մարզի խոշոր գյուղերում բնակեցնում էին նույն անասնապահ ադրբեջանցիներին ստիպում գյուղապետերին, որ տեղ հատկացնեն նրանց համար: Այս քաղաքականությունը իրականացվում էր Ղարաբաղի բոլոր բնակավայրերում: Միևնույն ժամանակ նեղելով հայ բնակչությանը ստիպում էին թողնել հեռանալ հայրենիքից: Մարզի հայաբնակ տարածքներում դատարկ խանութներ էին: Թե արդյունաբերական, թե գյուղատնտեսական արտադրանքը միզրային գներով տանում էին մեզանից: Կորզում էին գյուղատնտեսական հումքը հայ բնակչությանը թողնելով անմխիթար վիճակում: Եվ այսպես տարեցտարի ավելանում է հակամարտության ծնող պատճառները: ԼՂԻՄ- ը հանդիսանալով մսի, կաթի, բանջարեղենի խոշոր արտադրող չուներ երշիկեղենի, կաթնամթերքների, կենդանական յուղի, պահածոների արդյունաբերական արտադրություն, նույնիսկ ալրաղաց: Ադրբեջանական գաղութատիրության 70 տարիներին ԼՂԻՄ-ի հայ բնակչության Մայր Հայրենիքի վերամիավորման համար երբեք չդադարած պայքարի հետևանքով, Ադրբեջանը ստիպված է եղել Լեռնային Ղարաբաղում թույլատրել կազմակերպելու արտադրության որոշ ճյուղեր: Ընդհանուր առմամբ հայկական այդ ինքնավարության տարածքում 70 տարիների ընթացքում կազմակերպվել է արդյունաբերական 24 ձեռնարկություն, որոնցից միայն 2-3-ը կարելի է անվանել խոշոր գործարան: Մասնավորապես, ինքնավար մարզի արդյունաբերությունը ունի հետևյալ կառուցվածքը.

Էլեկտրաէներգետիկ տնտեսություն, որը ներկայացված է Սարսանգի ՀԷԿ-ով, 50 հազ. կվտ հզորությամբ, որի տնօրինությունն էլ հանձնված էր ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս գտնվող Միրբաշիր ադրբեջանական քաղաքի էներգոցանցին: Մինչև 1990-ական թվականները մաքսիմում այստեղ տարեկան արտադրվել է 80,9 մլն. կվտ-ժամ էլեկտրաէներգիա [5]:

Լեռնակին Ղարաբաղում արտադրվող էլեկտրաէներգիայի աճի շարժի մասին պատկերացում է տրված ստորև զետեղված աղյուսակում [3, 4]:

Աղյուսակ 1

Արտադրանքի անվանումը	*Չափի միավորը*	*Տարիներ*											
		1940	*1945*	*1950*	*1955*	*1957*	*1958*	*1960*	*1962*	*1986*	*1995*	*1996*	*1999*
Էլեկտրաէներգիա	*Հազ. կվտ.*	*1514*	*817*	*4669*	*9226*	*11727*	*13503*	*13880*	*14300*	*57800*	*81600*	*58700*	*82800*

1940թ.	1514
1945թ.	817
1950թ.	4669
1955թ.	9226
1957թ.	11727
1958թ.	13503
1960թ.	13880



1962թ.	14300
1986թ.	57800
1995թ.	81600
1996թ.	58700
1999թ.	82800

Թեթև արդյունաբերություն մինչև 1970-ական թվականները ներկայացված էր Ստեփանակերտի մետաքսի կոմբինատով, որը արտադրում էր տարեկան մինչև 17.5 մլն գծամետր գործվածք [1]: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը հատուկ նպատակաուղղվածությամբ, այս խոշոր կոմբինատը չուներ, չէր ստեղծվել մետաքսե գործվածքների արտադրության վերջին՝ ներկման արտադրամասը: Այսպիսով ԼՂԻՄ-ում արտադրված այդ ամբողջ արտադրանքը կիսաֆաբրիկատ անվան տակ տեղափոխվում էր ադրբեջանական Նուխի (Շաքի) քաղաքի համանման ֆաբրիկան, այնտեղ ներկվում և ադրբեջանական պիտակով դուրս բերվում սպառման:

Ստորև զետեղված աղյուսակում տրված է Ղար մետաքսկոմբինատի արտադրանքի շարժը 1940-1992 թթ.[3, 4]

Աղյուսակ 2

Արտադրանքի անվանումը	*Չափի միավորը*	*Տարիներ*														
		1940	*1960*	*1965*	*1970*	*1971*	*1972*	*1973*	*1985*	*1987*	*1988*	*1990*	*1991*	*1992*	*1997*	*1999*
Մետաքսե գործվածք	*մլն. գ.մ.*	*0.1*	*2.3*	*4.1*	*9.8*	*10.4*	*11.3*	*11.5*	*17.5*	*16.7*	*9.7*	*9.4*	*5.9*	*0.38*	*0.80*	*0.30*

1940թ.	0,1
1960թ.	2,3
1965թ.	4,1
1970թ.	9,8
1971թ.	10,4
1972թ.	11,3
1973թ.	11,5
1985թ.	17,5
1987թ.	16,7
1988թ.	9,7
1990թ.	9,4
1991թ.	5,9



1992թ.	0,38
1997թ.	0,8
1999թ.	0,3

Լեռնային Ղարաբաղի բնակչության համար աշխատատեղեր ստեղծելու վերաբերյալ տարեց-տարի աճող բողոքների արդյունքում, 1970-ական թվականներին Ստեփանակերտում կառուցվում է կոշիկի ֆաբրիկա, որի տարեկան հզորությունը կազմում էր 4.5 մլն. զույգ [2]:

Ստորև զետեղված աղյուսակում բերված փաստացի տվյալները ցույց են տալիս, թե Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկայի շահագործումից հետո, 1972 թ. սկսած թողարկվող արտադրանքը ինչպիսի շարժ է ունեցել [6]:

Աղյուսակ 3

Արտադրության անվանումը	*Չափի միավորը*	*Տարիներ*														
		1940	*1950*	*1960*	*1971*	*1972*	*1973*	*1985*	*1987*	*1988*	*1990*	*1991*	*1992*	*1996*	*1998*	*1999*
Կաշվե կոշկեղեն	*Հազ. զույգ*	*12*	*20*	*75*	*72*	*655*	*1235*	*4514.1*	*4514.9*	*2280*	*1623.2*	*1447*	*169*	*31.0*	*64.9*	*82.8*

1940թ.	12
1950թ.	20
1960թ.	75
1971թ.	72
1972թ.	655
1973թ.	1235
1985թ.	4514,1
1987թ.	4514,9
1988թ.	2280
1990թ.	1623,2
1991թ.	1447
1992թ.	169



1996թ.	31
1998թ.	64,9
1999թ.	82,8

Թեթև արդյունաբերության մյուս համեմատաբար նշանավոր ձեռնարկությունը Ստեփանակերտի գորգագործական «Ղարաբաղ» ֆաբրիկան էր: Այս ճյուղի մյուս նշանավոր ձեռնարկությունը կարի ֆաբրիկան էր:

Խորհրդային իշխանության ամբողջ ժամանակաշրջանում թեթև արդյունաբերությունը տալիս էր ԼՂԻՄ-ի ամբողջ արդյունաբերության համակարգում թողարկվող արտադրանքի ավելի քան 50%-ը: Ըստ որում, ինչպես նկատվեց, այդ ճյուղի բոլոր նշանավոր ձեռնարկությունները տեղաբաշխված են Ստեփանակերտում:

Սննդի արդյունաբերություն թողարկող արտադրանքի արժեքային արտահայտությամբ թեթև արդյունաբերությունից հետո զբաղեցնում էր հաջորդ տեղը: Սակայն, վերջինիս համեմատությամբ նրա կարևոր առանձնահատկությունը այն է, որ աշխարհագրական առումով համեմատաբար լայն տարածում ուներ:

Սննդի արդյունաբերության կառուցվածքում հատկապես նշանակալից տեղ ունեն հացաբուլկեղենի, մսի ու մսամթերքի, խմիչքների կաթի վերամշակման և կաթնամթերքների արտադրությունը:

Մսի ու մսամթերքների համեմատաբար նշանավոր ձեռնարկությունը Ստեփանակերտի մսի կոմբինատն է: Սակայն այն իր տեխնիկական զինվածությամբ, հզորությամբ, արտադրանքի տեսականու, թողարկվող արտադրանքի որակական հատկանիշներով հեռու է ժամանակակից պահանջներից: Մինչ դեռ ԼՂՀ հումքային բազան հնարավորություն էր ընձեռում ունենալ ոչ միայն տեղի պահանջները լրիվ ապահովող կատարելագործված արտադրություն, այլև զգալի քանակությամբ պատրաստի բարձրորակ մսամթերք արտահանել Հայաստանի Հանրապետություն: Մինչև 1980-ական թթ. վերջերը այդ կոմբինատը տարեկան թողարկում էր 4,4 հազար տոննա արտադրանք, պատերազմի տարիներին այն նույնպես խիստ տուժել է:

Ստորև բերված աղյուսակի փաստացի տվյալները ցույց են տալիս Ստեփանակերտի մսի կոմբինատի արտադրանքի շարժը 1985- 1999 թթ.[4]

Աղյուսակ 4

Արտադրության անվանումը	*Չափի միավորը*	*Տարիներ*												
		1985	*1987*	*1988*	*1989*	*1990*	*1991*	*1992*	*1993*	*1994*	*1995*	*1996*	*1998*	*1999*
Միս և	*տոննա*	*3838.0*	*4242.0*	*3125.7*	*4431.0*	*3512.0*	*1330.0*	*296.0*	*284.9*	*320.0*	*301.5*	*392.4*	*88.7*	*76.4*

մասմը-թերք	*ա*													

Խմիչքների արտադրությունը մինչև 1980-ական թթ. վերջերը Լեռնային Ղարաբաղի սննդի արդյունաբերության առաջատար ենթաճյուղն է եղել: Գինու, կոնյակի, օղու արտադրությունը հիմնականում իրականացվում էր Ստեփանակերտի գործարանում: Գինի արտադրվում էր նաև Ասկերանի, Գևորգավանի, Կուրապատկինոյի, Լենինավանի, Ճարտարի գործարաններում: Պատերազմի տարիներին դրանք հիմնականում ավերվել են, այժմ գործում է Ստեփանակերտի գործարանը: 1990-ական թթ. սկզբներից արտադրանքի չափը կտրուկ իջել է կապված պատերազմական գործողությունների հետ:

Ստորև զետեղված աաղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս Լեռնային Ղարաբաղի գինու և կոնյակի արտադրության շարժը 1940-1999 թթ.[3, 6]

Աղյուսակ 5

Արտադրանքի անվանումը	*Չափի միավորը*	*Տարիներ*												
		1940	*1950*	*1960*	*1970*	*1973*	*1980*	*1986*	*1993*	*1994*	*1995*	*1996*	*1998*	*1999*
Գինի	*Հազ.դ.լ.*	*105.2*	*158.1*	*471.5*	*539.0*	*535.0*	*1946*	*118*	*26.5*	*34.6*	*19.6*	*25.5*	*2.5*	*12.6*
Կոնյակ	*Հազ.դ.լ.*	*1.2*	*6.0*	*11.4*	*11.0*	*8.0*	*53.8*	*57.5*	*20.2*	*27.1*	*7.0*	*7.9*	*21.5*	*4.4*

Կաթի վերամշակման և կաթնամթերքների արտադրության հիմնական ձեռնարկությունը Ստեփանակերտի կոմբինատն է, որտեղ մինչև 1980-ական թթ. վերջերը տարեկան արտադրվել է 7,5 հազ. տն. կաթնամթերք, 500-700 տն. պանիր, 600-950 տն. կենդանական յուղ:

Ստորև բերված աղյուսակը պատկերացում է տալիս ԼՂՀ –ում արտադրվող կենդանական յուղի, պանրի ու կաթնամթերքի ծավալների մասին [3, 6]:

Աղյուսակ 6

Արտադրանքի անվանումը	*Չափի միավորը*	*Տարիներ*												
		1985	*1987*	*1988*	*1989*	*1990*	*1991*	*1992*	*1993*	*1994*	*1995*	*1996*	*1998*	*1999*
Կենդանա-կան յուղ	*տոննա*	*966.0*	*935.0*	*830.6*	*599.1*	*443.3*	*208.3*	-	*2.8*	*24.6*	*11.1*	*6.8*	*8.4*	*2.7*
Պանիր (բրինզա)	*տոննա*	*767.0*	*1018.0*	*946.6*	*690.3*	*510.8*	*204.4*	-	*2.3*	*56.6*	*43.6*	*11.9*	*15.0*	*5.5*
Կաթնամթերք	*տոննա*	*7105.0*	*7970.0*	*7451.3*	*7459.6*	*7551.1*	*4425.8*	-	*6.5*	*15.2*	*95.8*	*43.2*	*126.3*	*114.5*

Անտառային ու փայտամշակման աարդյունաբերությունը աշխատողների թվաքանակով, նշանակությամբ, հումքային լայն բազայի առկայությամբ առաջնակարգ տեղ է զբաղեցնում: Ճյուղի խոշորագույն ձեռնարկությունը՝ Ստեփանակերտի կահույքի ֆաբրիկան պատերազմի տարիներին ավերվել է:

ԼՂԻՄ – ում խորհրդային իշխանության տարիներին կահույքի ու սղոցանյութի արտադրությունը զգալիորեն սկսել է աճել 1950-ական թվականներից: Ստորև տեղադրված աղյուսակում բերված են այդ ժամանակվա փաստացի տվյալները [4]:

Աղյուսակ 7

Արտադրանքի անվանումը	*Չափի միա-վորը*	*Տարիներ*									
		1940	*1950*	*1958*	*1960*	*1965*	*1966*	*1967*	*1970*	*1973*	*1999*
Կահույք	*Հազ.*	*26.3*	*177.8*	*668.8*	*785.5*	*1499.0*	*1543.0*	*1654.0*	…	…	*40.7*

	ռուբլի (այն ժամանակվա գներով)										*(մլն. դրամ)*
Արդյունաբերություն	*տոննա*	*1.3*	*2.0*	*6.7*	*11.4*	*11.4*	*13.9*	*6.4*	*18.0*	*12.1*	*5.0*

Մեքենաշինությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության համեմատաբար նոր ճյուղն է: Այն հիմք է դրվել 1970-ական թթ. սկզբներին: Այս ճյուղի սաղմնավորումը և հետագա զարգացումը պայմանավորված էր հիմնականում աշխատանքային ռեսուրսների օգտագործման հիմնախնդրով: Մեքենաշինությունը ԼՂՀ –ում դեռևս ներկայացված էր ընդամենը երկու ձեռնարկություններով՝ էլեկտրոտեխնիկական և կոնդեսատորների գործարաններով: Այս երկու ձեռնարկություններն էլ տեղաբաշխված էին Ստեփանակերտ քաղաքում:

Շինանյութերի արդյունաբերություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդյունաբերության այն ճյուղն է, որը ունի ամենից լայն ու բազմազան հնարավորությունները, հումքային ռեսուրսներ: Այս ճյուղի խոշոր ձեռնարկությունը Ստեփանակերտի շինանյութերի կոմբինատն է, որը ԼՂՀ տարբեր շրջաններում արդյունահանում է մարմար, գրանիտ, կրաքար և այլ քարանյութեր, արտադրում երեսպատման սալիկների, խիճ ու այլ արտադրանք: Սակայն գաղութատիրության պայմաններում ԼՂՀ այդ ռեսուրսները նույնպես օգտագործվում էին բարբարոսաբար, խիստ անխնա, արտադրանքը հիմնականում սպառվում Բաքվում: Մինչև 1980-ական թթ. վերջերը այստեղ տարեկան արտահանվում էր մինչև 9,6 հազ. մ^3 մարմարի բլոկ, արտադրվում էր 182.5 հազ. մ^2 մարմարի սալիկ, 148.5 հազ. տոննա մարմարի խիճ և այլ արտադրանք, որոնք ինչպես ասվեց սպառվում էր Բաքվում և Ադրբեջանի մյուս քաղաքներում: Մինչ դեռ տեղում այդպիսի շինանյութերի պահանջը մեծ էր: Վերջիններիս արտադրանքի չափերի մասին պատկերացում է տալիս ստորև տեղադրված աղյուսակը[6]:

Աղյուսակ 8

Արտադրանքի անվանումը	*Չափի միա-վորը*	*Տարիներ*									
		1985	*1987*	*1988*	*1989*	*1990*	*1991*	*1992*	*1993*	*1998*	*1999*
Մարմար իբլոկ	*մ^3*	*8844.0*	*9671.0*	*3917.0*	*4182.5*	*4300.0*	*2710.0*	*…*	*377.4*	-	-
Մարմար ի սալիկ	*մ^2*	*748100.0*	*152570.0*	*89900.0*	*50573.0*	*53171.0*	*40485.0*	*…*	-	*2.5*	*6.0*
Մարմար ի խիճ	*տոննա*	*111800.0*	*148500.0*	*95800.0*	*58000.0*	*185.00.0*	*2210.0*	*…*	-	-	-

Ահա այդպիսի պատկեր ուներ Ադրբեջանի վարած գաղութային տնտեսական քաղաքականությունը Արցախում:

Հակամարտության էթնիկական, սոցիալ-տնտեսական, քաղաքակրթական, կրոնական, վարչաքաղաքական բաղադրիչներն իրենց խտացված արտահայտությունը գտել էին մեկ ընդհանուր ոլորտում: Դա *ուղղակիորեն պետական կառավարման տոտալիտար ձևն էր, որն Ադրբեջանի գլխավոր (տիտղոսային) ազգի կողմից վարպետորեն օգտագործվում էր ինքնահաստատման ու կոնսոլիդացման և փոքրամասնություն կազմող տեղաբնիկ ազգերին, դրանց թվում և հայերին ճնշելու և ձուլելու* նպատակին միտված քաղաքականությունը տալիս էր իր արդյունքը: Արևելյան Անդրկովկասի բազմաէթնիկ տարածքի պատմության մեջ առաջին անգամ ստեղծված միասնական պետական կազմավորումն իր վրա վերցրեց Ադրբեջան անվանումը, որը հետագայում դարձավ պաշտոնական և ընդունվեց միջազգային հանրության կողմից: Պահանջվեց բավականին երկար ժամանակ, որպեսզի պետության Ադրբեջան անվանումը տարածվի մեծամասնություն կազմող ազգության վրա նույնպես: «Ադրբեջանցիներ», «ադրբեջանական ազգ» տերմինները *պաշտոնականություն ստացան 30-*

ական թվականներից միայն փոխարինելով «կովկասյան թաթարներ» կամ «մահմեդականներ», «թուրքեր» տերմիններին:

Հաջորդ տասնամյակներում Ադրբեջանի պաշտոնական վիճակագրությունն ամեն մի նոր մարդահամարի ժամանակ «գրանցում էր» հանրապետության բնակչության ազգային կազմի նոր փոփոխություն հօգուտ «ադրբեջանցիների» տեսակարար կշռի բարձրացման և ազգային փոքրամասնությունների նվազման:

Հայերին վերաբերող տվյալներն ունեին հետևյալ պատկերը: Լեռնային Ղարաբաղի այն հատվածում, որը տրամադրվեց նորաստեղծ ինքնավար մարզին, 1923թ. տվյալներով բնակվում էր 158 հազ. մարդ, որի 94.4 % հայեր էին: Ընդգծենք, որ մինչ այդ եղած վարչատարածքային բաժանումով Լեռնային Ղարաբաղի մեջ են եղել նաև Ինքնավար մարզի սահմաններից դուրս թողնված այն տարածքները, որտեղ հետագայում ստեղծվել են Շահումյանի, Քարվաճառի և Բերձորի վարչական շրջանները (վերջին երկուսը ստեղծվել են հիմնականում Կարմիր Քրդստան անունը կրող վարչական շրջանի սահմաններում, որը 30-ական թվականների սկզբում լուծարվեց):

Լեռնային Դարաբաղի Ինքնավար Մարզը Անդրկովկասի 8 վար- չաքադաքական տարածքային միավորներից (3 միութենական հանրապետություն, 3 ինքնավար հանրապետություն և 2 ինքնավար մարզ) միակն էր, որի բնակչության ընդհանուր թիվը 1923-1979թթ. ընթացքում չէր աճում, և դա այն դեպքում, երբ Ադրբեջանական ԽՍՀ-ում ամբողջությամբ վերցրած այդ ցուցանիշը գրեթե եռապատկվել էր, իսկ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում աճել էր 2.5 անգամ: Դրան զուգահեռ Ադրբեջանի բնակչության ընդհանուր թվում կայուն ձևով նվազում էր հայերի և մյուս ազգային փոքրամասնությունների (հատկապես քրդերի, լեզգիների, թալիշների) տեսակարար կշիռը: Առավել նկատելի էր Լեռնային Դարաբաղի հայ բնակչության թվի ինչպես հարաբերական, այնպես էլ բացարձակ նվազումը: Բացարձակ նվազումը տեղի էր ունենում հայ բնակչության արտագաղթի, իսկ հարաբերական նվազումը, որի տեմպերը շատ ավելի բարձր էին, նաև ադրբեջանցիների թվի արագ, հիմնականում մեխանիկական աճի հետևանքով, այսպես օրինակ 1939թ. ԼՂԻՄ – ում ադրբեջանցիների թիվը կազմել է 14 հազ. մարդ [7], իսկ 1989թ. ավելի քան 40 հազ., այսինքն այդ տարիներին նրանց թիվը ավելացել է 26 հազարով: Մինչդեռ նույն ժամանակահատվածում մարզի հիմնական բնակչության՝ հայերի թիվը 133 հազարից դարձել է 145 հազար, այսինքն հայերի թիվը ավելացել է ընդամենը 13 հազարով: Եվ դա այն դեպքում , երբ այդ տարիներին Լերնային Ղարաբաղի բնակչության բնական աճը յուրաքանչյուր հազար մարդու հաշվով կազմել է 25-32 մարդ: Այդպիսի աճի ու արցախցու երկարակեցության պայմաններում ԼՂԻՄ- ի բնակչությունը 1990-ական թվականների սկզբներին կարող էր հասնել 450-500 հազար մարդու: Մինչդեռ 1989թ. մարդահամարի տվյալներով, այն կազմել է միայն 189 հազար մարդ: Դրա պատճառը, ինչպես ասվել է, մարզում վերամշակող ձեռնարկությունների, աշխատատար պրոցեսներ ունեցող արտադրաճյուղեր չստեղծման ադրբեջանական հեռահար, նպատակային հայաթափման քաղաքականությունն էր: «Ինտերնացիոնալ Խորհրդային Ադրբեջանի» իշխանությունների կողմից «լենինյան ազգային քաղաքականության հետևողական կիրառման» շնորհիվ տեղաբնիկ հայ բնակչության բաժինը մարզի բնակչության ընդհանուր թվում հակամար- տության ակտիվ փուլի նախօրյակին նվազել էր մինչև 75%-ի: Տեղին էին զգուշացնում վերլուծաբանները, որ այդ միտումի հետագա զարգացումը չկանխելու դեպքում Լեռնային Դարաբաղը կհայտնվեր հայաթափման վտանգի առջև և կկրկներ Նախիջևանի ճակատագիրը, որտեղ ժամանակին մեծամասնություն կազմող հայ բնակչության և ոչ մի ներկայացուցիչ այժմ չկա:

Ահա այդ հեռանկարն էր, որ Դարաբաղի հայության մոտ մշտապես բարձր էր պահում օտար ճնշումից ազատվելու, սեփական բախտը ինքնուրույնաբար տնօրինելու և հարևան ժողովուրդների հետ իրավահավասարության պայմաններում ապրելու բնական ձգտումը.

Ինչպես արդեն նշել ենք, անցյալ դարի 80-ական թվականների կեսերից Խորհրդային Միությունում սկսված սոցիալ-քաղաքական բարեփոխումները, տոտալիտարիզմի թուլացումը և ազատական գաղափարների տարածումը չէին կարող անփոփոխ թողնել նաև տասնամյակներ անընդհատ տոտալիտար եղանակներով պարտադրվող «ազգամիջյան խաղաղ հարաբերությունները»: Եվ այդ հարաբերությունները, ինչպես և սպասվում էր, դուրս եկան կենտրոնական իշխանության վերահսկողությունից և *դարձան անկառավարելի:*

Ղարաբաղի բնակչությունն իրեն հայտարարեց Հայաստանի Հանրապետության բաղկացուցիչ մաս: Հայաստանը ընդունեց դա, Ադրբեջանը մերժեց և փորձեց զենքի ուժով Ղարաբաղը ենթարկել

իրեն: Ադրբեջանին պաշտպանում էին Թուրքիան և Անգլիան, որոնք այդ ժամանակ Անդրկովկասում զորքեր ունեին: Սակայն ղարաբաղցիներին ծնկի բերել չհաջողվեց: Նրանք զենքով պաշտպանում էին իրենց անկախությունը և պատմական հայրենիքում մնացած հայության հետ նույն՝ հայկական պետության մեջ ապրելու իրավունքը:

Գրականություն

1. Լեռնային Ղարաբաղի Մարզի 40 տարին, Բաքու, 1963, 60 էջ
2. Վ. Ե. Խոջաբեկյան – Արցախը փորձության ժամին, Երևան 1991150 էջ
3. Ն. Ս. Շահնազարով- Լեռնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզ, Բաքու 1960, 76 էջ
4. Վիճակագրական ժողովածու, ԼՂՀ վիճակագրություն, Պետռեգիստրի և վերլուծության վարչություն, Ստեփանակերտ 1997, 36 էջ
5. Սերգեյ Մելքումյան- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1997թ, 373 էջ
6. Нагорный Карабах за годы Советской власти (стат. сборник), Степанакерт 1968, 97стр.
7. Лисицян С. Армяне Нагорного Карабаха, Ереван 1992, 52 стр.